



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի 2006թ.

N221

ք.Ստեփանակերտ

ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*:

1. Հաստատել ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության անկախ փորձաքննության իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ վարչապետ

Ա. ՂԱՆԻԵԼՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության անկախ փորձաքննության իրականացման գործընթացը:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են այն իմաստով, որոնք սահմանված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով և «Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

3. Սույն կարգի դրույթները տարածվում են երկրաբանական ուսումնասիրություն կատարող, օգտակար հանածոներ արդյունահանող և օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցներ շահագործող ընդերքօգտագործողների վրա:

4. Սույն կարգի նպատակն է լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին տրամադրված ընդերքի տեղամասի վերաբերյալ նախկինում կատարված երկրաբանական և այլ տեղեկատվության արդյունքների ճշտումը, եթե փոխվել են ընդերքի տեղամասի կառուցվածքի, կազմի, քանակի, դրանում օգտակար հանածոների առկայության և այլ հատկությունների, ինչպես նաև ընդերքի օգտագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տվյալները և մոտեցումները:

5. Անկախ փորձաքննություն կարող են իրականացնել իրավաբանական և ֆիզիկական անձինք (այդ թվում՝ օտարերկրյա)՝ ընդերքօգտագործողի սեփական միջոցների հաշվին:

6. Անկախ փորձագետի ընտրությունը կատարվում է ընդերքօգտագործողի կողմից:

7. Անկախ փորձաքննության կարող է ենթարկվել լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին տրամադրված ընդերքի տեղամասի մասին հետևյալ երկրաբանական տեղեկատվությունը՝

ա) ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրության նյութերը,
բ) օգտակար հանածոների հանքավայրերի որոնման, հետախուզման և գնահատման վերաբերյալ նյութերը,

գ) շահագործվող ու շահագործման նախապատրաստվող հանքավայրերի լրահետախուզմանը և շահագործման հետախուզությանը վերաբերող նյութերը,

դ) օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների շահագործման համար ընդերքի նախատեսված տեղամասի երկրաբանական ուսումնասիրության նյութերը:

8. Եթե անկախ փորձաքննության արդյունքում փոխվել են պատկերացումներն ընդերքի երկրաբանական կառուցվածքի կամ հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականի վերաբերյալ, ապա ընդերքօգտագործողը կարող է անկախ փորձաքննության նյութերը ներկայացնել լիազոր մարմին՝ քննարկման և հաստատման:

9. Ներկայացված նյութերը լիազոր մարմինը պարտավոր է ենթարկել պետական ընդերքաբանական փորձաքննության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի «Յետախուզված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննության կարգը հաստատելու մասին» թիվ 287 որոշմամբ հաստատված կարգին համապատասխան:

10. Լիազոր մարմնի կողմից փորձաքննության արդյունքները չհաստատվելու դեպքում ընդերքօգտագործողն այն կարող է բողոքարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս. Գրիգորյան